

«ՆայՌ-ուսգազարդ» ՓԲԸ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՆՆ ՆԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱԽՆԱԺՈՂՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական փեղեկանքը կազմվել է հաշվի առնելով ՏՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մարտի 7-ի №97Ա որոշմամբ (2008 սեպտեմբերի 16-ի NARG-01-24/3927 գրությամբ «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ն դիմել էր հանձնաժողով 2008-2010 թվականի ներդրումային ծրագրի 2008 թվականի ներդրումների ծավալում փոփոխություններ կատարելու համար: Առաջարկվող փոփոխությունները նույնպես հաշվի են առնվել սույն վերլուծական փեղեկանքում:) համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2009 թվականի մայիսի 13-ի №ARG-01-14/1518 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2008 թվականի ներդրումային ծրագիրը

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2008 թվականի փարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2008-2010 թվականների եռամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր փարքեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Ներդրումներ էր նախատեսված իրականացնել նաև այդ համակարգերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենաների և մեխանիզմների, համակարգչային փեխնիկայի և արտադրական գույքի ու գործիքների ձեռքբերման ուղղությամբ:


Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2008-2010 թվականի ընթացքում իրականացնել 51 263,6¹ մլն դրամի ներդրումներ, որից 32 913,9 մլն դրամը 2008 թվականին, այդ թվում՝

- գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 4 914,2 մլն դրամ
- Արվյանի գազի ստորգեղարկյա պահեստարան կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 1 185,8 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 14910,0 մլն դրամ,

¹ Սույն վերլուծական փեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 170,8
- գազաբաշխման համակարգի ընդլայնման և նոր բաժանորդների միացման ուղղությամբ ներդրումներ՝ 2 442,0 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 5894,1 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 3 397,0 մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2008 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:



Ինչպես տեսնում ենք գրաֆիկ 1-ից, ներդրումների 64.4%-ը նախատեսվում է իրականացնել գազափոխադրման համակարգում, որից գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ՝ ներդրումների 45.3%-ը, 35.6%-ը՝ գազաբաշխման համակարգում (որից՝ գազաբաշխման համակարգի ընդլայնման ուղղությամբ՝ 7.4%, գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ՝ 17.9% և գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով՝ 10.3%):

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 2008 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Նամաձայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը 2008 թվականի ընթացքում կատարել է 117517.6 մլն դրամի ներդրումներ (որից 75250.5 մլն դրամը Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցման ուղղությամբ), որի արդյունքում շահագործման են հանձնվել 11909.0 մլն դրամի հիմնական միջոցներ և իրականացվել են 828.8 մլն դրամի ընթացիկ ծախսեր: Մնացած 105608.6 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից փաստացի իրականացված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		Ընդամենը կատարված ներդրումներ		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ
1	2	4	5	6	7	8
1	Գազափոխադրման համակարգի վերակառուցում և վերազինում	4 914,2	14,9%	1 056,7	7,9%	21,5%
2	Գազափոխադրման համակարգի ընդլայնում	14 910,0	45,3%	29 709,7	221,9%	199,3%
3	Արժույթի ԳՄԴԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքներ	1 185,8	3,6%	640,9	4,8%	54,0%
4	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ	170,8	0,5%	26,2	0,2%	15,3%
5	Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում	2 442,0	7,4%	2 919,8	21,8%	119,6%
6	Գազաբաշխման համակարգի վերակառուցում և վերազինում	5 894,1	17,9%	6 523,2	48,7%	110,7%
7	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ	3 397,0	10,3%	1 390,6	10,4%	40,9%
8	Այլ ներդրումներ			828,8	6,2%	
9	Ընդամենը՝ առանց գազափոխադրման համակարգի ընդլայնման աշխատանքների	18 003,9		13 386,2		74,4%
10	Հրազդան ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցում			75 250,5		
11	Ընդամենը	32 913,9		118 346,4		

Այս ծավալում (13386.2 մլն դրամ) հաշվի չեն առնվել Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցման ուղղությամբ իրականացված 75250.5 մլն դրամի ներդրումները (այս ուղղությամբ իրականացված ավարտված ներդրումների ծավալը կազմել է 373.8 մլն դրամ, որը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրում-

ների ծավալից), քանի որ դրանք նախապես համաձայնեցված չեն եղել և չեն բխում ընկերության լիցենզավորված գործունեությունից: Ուստի ներդրումային ծրագրի կադարման ցուցանիշը դիտարկվել է առանց հաշվի առնելու նշված ուղղությամբ ներդրումների կադարման ցուցանիշը:

Արդյունքում ներդրումային ծրագրի կադարման ցուցանիշը կազմել է 74.4%:

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2
մլն դրամ

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Կապիտալացված և հետագա կապիտալացման ենթակա ծախսեր	Ընթացիկ ծախսեր	ԸՆԴԱՄԵՆԸ
1	2	3	4	5
1	Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից	1942,3	0,0	1942,3
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	89891,4	419,7	90311,1
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	1795,9	0,0	1795,9
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներից	23887,9	409,1	24297,0
4,1	<i>աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր</i>	703,5	109,5	813,0
4,2	<i>հումք և նյութեր</i>	22246,6	273,8	22520,5
4,3	<i>տեղակայման ենթակա սարքավորումներ</i>	850,7	0,0	850,7
4,4	<i>այլ</i>	87,1	25,8	112,9
5	ԸՆԴԱՄԵՆԸ	117517,6	828,8	118346,4

Ինչպես փեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2008 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 118346.4 մլն դրամ գումար, որից մոտ 99.3 %-ը հանդիսանում է կապիտալացած և հետագայում կապիտալացման ենթակա աշխատանքների արժեքը, իսկ 0.7%-ը ընթացիկ ծախսերով ձևակերպված աշխատանքների արժեքը: Ներդրումների մեծ մասը՝ մոտ 76.3%-ը, իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի մոտ 20.5%-ը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սպորն, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2008 թվականին իրականացված ներդրումների ծավալները հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման փաստակցումից: Նարկ ենք համարում նշել, որ սույն վերլուծական փեղեկանքում սակագրնով փոխհատուցման ենթակա ներդրումների ներկայացված ծավալը վերջնական չէ և հետագայում կարող է ճշգրտվել մոնիթորինգի իրականացման արդյունքներով:

Իրականացված ներդրումների կազմում ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումները իրենցից ներկայացնում են գազափարերի և գազահաշվիչների, թվով 368 ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների, համակարգչային փեխնիկայի, գրասենյակային գույքի և այլ հիմնական միջոցների ընթացիկ նորոգման ծախսեր: Նշված ծախսերը սակագնում ներառվող ընթացիկ ծախսեր են, ուստի դրանք ամբողջ ծավալով ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

Գազափոխադրման համակարգի վերակառուցում և վերազինում

Գազափոխադրման համակարգի վերակառուցման և վերազինման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 4914.2 մլն դրամի ներդրումներ՝ մայրուղային գազափարերի շինարարություն, գազափարերի բացված հարվածների վերականգնման և ամրացման, գազաբաշխիչ կայանների շինարարության, չափիչ հանգույցների արդիականացման, էլեկտրապաշտպանիչ կայանների, գծային փականների վերազինման և նորերի փեղադրման, ինչպես նաև գազափոխադրման համակարգում հաշվառման համակարգի արդիականացման նպատակով:

Ընկերությունն այս ուղղությամբ իրականացրել է 1056.7 մլն դրամի ներդրումներ՝ նախատեսվածի 21.5%-ը, որի արդյունքում ավարտվել են 964.8 մլն դրամի աշխատանքներ: 91.9 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում 220.2 մլն դրամ արժեքով աշխատանքներ նախատեսված չեն ներդրումային ծրագրով և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից. Մասնավորապես.

Մայրուղային գազափարերի շինարարություն, վերափեղադրում և վթարային հարվածների փոխարինում	99.2 մլն դրամ
Գազաբաշխիչ կայանների	116.2 մլն դրամ

շինարարություն և վերազինում	
Քազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում	4.8 մլն դրամ
Ընդամենը	220.2 մլն դրամ

Այս ուղղությամբ իրականացված 744.6 մլն դրամի ներդրումները կներառվեն սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսված ներդրումներ

2008 թվականին Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1185.8 մլն դրամ գումար: Փաստացի ներդրվել է 640.9 մլն դրամի գումար՝ նախատեսվածի 54.0%-ը, որի արդյունքում ավարտվել են 489.9 մլն դրամի աշխատանքներ: Մնացած 151.0 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ: Այս ուղղությամբ իրականացված ներդրումներն ամբողջ ծավալով կներառվեն սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Քազափոխադրման համակարգի ընդլայնում

Քազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 14910.0 մլն դրամ: Փաստացի իրականացված ներդրումների ծավալը, համաձայն ներկայացված հաշվետվության, կազմել է 29709.7 մլն դրամ: Այս ծավալում իրականացվել է 117.2 մլն դրամի գազատարի մաքրման թվով 6 սարքավորումների ձեռքբերում, որի սակագնով փոխհատուցման հարցը կդիտարկվի Իրան-Նայաստան գազատարի ամբողջական շահագործման հանձնելուց հետո: Մնացած՝ 29592.5 մլն դրամի ներդրումները մնացել են անավարտ:

Քազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Քազափոխադրման համակարգի համար նախատեսվում էր ձեռք բերել 13 միավոր մեքենա-մեխանիզմներ, դյուրափար համակարգիչներ, չափիչ-ստուգիչ կետեր, կապի միջոցներ և այլն: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 170.8 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 26.2 մլն դրամ գումար՝ նախատեսվածի 15.3%-ը, որից 3.9 մլն դրամը ծախսվել է չափիչ-ստուգիչ կետերի ձեռքբերման ուղղությամբ: Այս ուղղությամբ 4.6 մլն դրամի ներդրումները իրականացվել են ներդրումային ծրագրով չնախատեսված սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ և ենթակա են նվազեցման

սակագնով փոխհարուցվող ներդրումների ծավալից: Իրականացված 19.7 մլն դրամի ներդրումները կներառվեն սակագնով փոխհարուցման ենթակա ներդրումների ծավալում: Մնացած՝ 1.9 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում

Այս նպատակով 2008 թվականին նախատեսվում էր իրականացնել 2442.0 մլն դրամի ներդրումներ, որից 1042.0 մլն դրամը գազաբաշխման ցանցի ընդլայնման, իսկ 1400.0 մլն դրամը նոր բաժանորդների միացման նպատակով: Պետք է ավարտվեին նախկինում սկսված սակայն անավարտ գազափարերի շինարարությունը և գազաբաշխման ցանցին միացվեին 50 000 նոր բաժանորդներ: Փաստացի իրականացված ներդրումների ծավալը կազմել է 2919.8 մլն դրամ՝ (այս ծավալում 444.0 մլն դրամը իրականացվել է նախորդ ժամանակաշրջանում) նախատեսվածի 119.6%-ը: Իրականացված ներդրումների արդյունքում ավարտվել են 1194.7 մլն դրամի գազափարերի կառուցման և վերաբեռնարկման աշխատանքներ, ինչպես նաև սպառողների համար փողակայվել են 1536.1 մլն դրամի հաշվառման համալիրներ: 189.0 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

2008 թվականի ընթացքում գազաբաշխման ցանցին են միացվել նոր 57897 բաժանորդներ և ընկերության բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 574169:

Այս ուղղությամբ իրականացված ներդրումներն ամբողջ ծավալով կներառվեն սակագնով փոխհարուցման ենթակա ներդրումների ծավալում:

Գազաբաշխման համակարգի վերակառուցում և վերազինում

Գազաբաշխման համակարգի վերակառուցման և վերազինման նպատակով նախատեսվում էր իրականացնել գազափարերի վերականգնման, էներգամատակարարման և հաշվառման համակարգերի արդիականացման, էլեկտրապաշտպանիչ կայանների փողակայման և այլ աշխատանքներ: Այս ուղղությամբ պետք է ներդրվեր 5894.1 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 6523.2 մլն դրամ՝ նախատեսվածի 110.7%-ը: Իրականացված ներդրումների արդյունքում ավարտվել են 5865.8 մլն դրամի աշխատանքներ:

Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում 266.4 մլն դրամ ընդհանուր ծավալով աշխատանքներ ենթակա են նվազեցման սակագնով փոխհարուցման ենթակա ներդրումների ծավալից, որից 6.0 մլն դրամ ծավալը նախատեսված չէր ներդրումային ծրագրով, իսկ 260.5 մլն դրամը ներդրումների նախատեսված ծավալը գերազանցող ներդրումներն են:

Այս ուղղությամբ իրականացված 5599.4 մլն դրամի ներդրումները կներառվեն սակագնով փոխհարուցման ենթակա ներդրումների ծավալում, իսկ 657.4 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են բայց շահագործման դեռ չեն հանձնվել:

Փազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ

Փազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտում ներդրումներ պետք է իրականացվեին հետևյալ ուղղություններով`

- շենքերի և շինությունների բարեկարգում,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերում և վերասարքավորում,
- համակարգչային տեխնիկայի և արտեսուարների ձեռքբերում,
- անվտանգության համակարգերի արդիականացում,
- կապի համակարգի բարելավում:

2008 թվականին շենքերի և շինությունների բարեկարգման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 424.0 մլն դրամի ներդրումներ: Փաստացի իրականացվել են 252.1 մլն դրամի ներդրումներ` նախատեսվածի 59.5%-ը, որից 39.6 մլն դրամը նախորդ տարվա անավարտ աշխատանքներն են, որոնք այս տարի ավարտվել են: Ընդհանուր առմամբ ավարտվել են 212.9 մլն դրամի շենքերի և շինությունների բարեկարգման աշխատանքներ:

Մեքենա-մեխանիզմների ձեռք բերման և վերասարքավորման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 775.5 մլն դրամ: Ընկերությունը 2008 թվականի ընթացքում ներդրել է 729.4 մլն դրամ` նախատեսվածի 94.1%-ը (այս ծավալում 8.2 մլն դրամը այս տարի ավարտված նախորդ տարվա անավարտ աշխատանքներն են): Այս ծավալում 195.2 մլն դրամը վարչական ապարատի համար ձեռքբերված մարդատար մեքենաներն են, որոնք ներդրումային ծրագրով նախատեսված չեն:

Անվտանգության համակարգերի արդիականացման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 22.6 մլն դրամի ներդրումներ, այդ թվում` նախատեսվում էր «1-04» ծառայությունում ներդնել հեռախոսաձայնագրման համակարգեր 3.6 մլն դրամ ընդհանուր ծավալով: Սակայն 2008 թվականին ընկերությունն այս ուղղությամբ ներդրումներ չի իրականացրել:

Կապի համակարգի բարելավման ուղղությամբ 2008 թվականի ընթացքում նախատեսված էր իրականացնել 16.7 մլն դրամի ներդրումներ: Ընկերությունը 2008 թվականի ընթացքում ներդրել է 19.1 մլն դրամ` նախատեսվածի 114.4%-ը, որից 5.4 մլն դրամը նախորդ տարվա անավարտ աշխատանքներից: Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում 2.4 մլն դրամ ընդհանուր ծավալով

աշխատանքներ ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ գերազանցում են հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը:

Քաղաքաշխման համակարգի տեխնիկա և տեխնոլոգիա ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 2158.2 մլն դրամի ներդրումներ, որից 1750.0 մլն դրամ նախատեսվում էր ծախսել սպառողների մոտ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման նպատակով և 20.0 մլն դրամ՝ համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով: Ընկերությունը 2008 թվականին այս ուղղությամբ իրականացրել է 103.8 մլն դրամի ներդրումներ, նախատեսվածի 4.8%-ը, որից 77.3 մլն դրամը ծախսվել է համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով: Այս ծավալում 57.3 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից, քանի որ գերազանցում է ներդրումային ծրագրով նախատեսված ծավալը: Ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման ուղղությամբ 2008 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

Քաղաքաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում իրականացված (ավարտված) ներդրումների ծավալում 473.8 մլն դրամ ընդհանուր ծավալով աշխատանքներ նախատեսված չեն ներդրումային ծրագրով և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

հազ. դրամ

1	2008 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	118346.4	
2	2008 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ԱՆԱՎԱՐՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ	105608.6	
3	2008 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ԱՎԱՐՏՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	12737.8	
4	Նանձնաժողովի աշխատակազմի կողմից չընդունված ներդրումների ծավալը, այդ թվում՝	2344.4	ենթակա չէ փոխհատուցման սակագնով
4.1	Նանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը, այդ թվում՝	1195.5	ենթակա չէ փոխհատուցման սակագնով
4.1.1	մայրուղային գազափարերի կառուցում, վերափրկողություն և փոխարինում	220.2	
4.1.2	Իրան-Նայասպան գազափարի կառուցում	117.2	
4.1.3	սարքավորումների ձեռքբերում	4.6	

4.1.4	«Արմֆլու» միկրոարոցեստրային ծախսաչափիչ համակարգերի տեղակայում	5.95	
4.1.5	վարչական ապարատի համար մեքենաների ձեռքբերում	195.2	
4.1.6	գրասենյակային գույքի և կենցաղային տեխնիկայի ձեռքբերում	278.6	
4.1.7	Նրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցում	373.8	
4.2	Ընթացիկ ծախսերով ձևակերպված ընթացիկ նորոգման աշխատանքներ	828.8	ենթակա չէ փոխհարուցման սակագնով
4.3	Նանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող չհիմնավորված ներդրումներ	320.1	ենթակա չէ փոխհարուցման սակագնով
5	2008 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհարուցման ենթակա ծավալը	10393.3	